

3370

# ԺԱՄԳԻՆ ՔԵՐԱԿՈՒՆ

ԵՒ

## ՀՅՈՒԹՑԱՐԱ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Պատրաստեց՝ ԲԻՒԹԱՆԱՑԻ



ԶԱՐԴԱՐՈՒԱԾ  
ԲԱԶՄԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Հրատարակումին  
«ՓԱՐՈՍ», ԳՐԱՏԱՆ

1932

Տիբրոյ  
ՄԻՇԻԿԸՆ

PRINTED IN U. S. A.

491.99-8

F-75

491-99-8  
Բ-75

Պատրաստեց՝ ԲԻՒԹԱՆԱՑԻ

Հ 42

# ԺԱՄ ԲՐԱՅԼԻ ԲԵՐԸՆԿՈՆ

ԵԿ

ՔՆԹԵՐՑԱՐԱՆ  
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ



1932

ԶԱՐԴԱՐՈՒԱԾ  
ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳԱՐՈՍ ԳՐԱՏԱՆ

ՏԻԹՐՈՅՑ. ՄԻՇԻԿԵՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԵՒՆԱՐԱԲ

2002

ԱՄԷՆ ԻՐԱԼՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ



2010

ԲՈԼՈՐԳԻՐ

w	r	q	t	b	g
�	ը	թ	ժ	ի	լ
ի	ծ	կ	հ	ճ	ն
ձ	Մ	յ	ն	շ	ն
չ	պ	զ	ո	ւ	վ
ս	ր	ց	լ	փ	ք
				ս	ֆ

- Պարզ գրը -

ա բ գ դ ե զ  
շ շ թ ւ թ թ թ թ  
չ չ թ ւ ն չ ն ն  
շ շ թ ւ ս չ ն ն

Զ Օ Ն



55940-սի

ՀՐԱՆԴ - ՍԱՐ Յ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻՆ

Թանկարգի Եղբայրություն

Թիւրանացի



1187-69




## ԳԼԽԱԳԻՐ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
Է	Ը	Թ	Ժ	Ի	Շ
Ւ	Ծ	Կ	Ճ	Ջ	Շ
Ծ	Մ	Յ	Ն	Շ	Ո
Չ	Պ	Ջ	Ր	Ս	Վ
Ր	Ր	Ջ	Ր	Ս	Փ
Ց	Ր	Ց	Ւ	Փ	Ք
Ց	Ց	Ց	Ւ	Փ	Ք

—. *Губернаторъ.* —

U R Q Y T Z S C P F P B M D G H  
Z N S I Z E C N Q M L M U V  
M P G F Y P F O F



w w u u w w u u w u w u w

n u n n w w r r w n n r w u n r

" a p n w  
 u n      u a p      u n u      n p      u n p  
 n u      u a u      p a u      p n      p n u  
 u n p      u n u      p n u      p a u      u a u      u a p




<i>ասո</i>	<i>պլար</i>	<i>ընպ</i>
<i>ար</i>	<i>ապլ</i>	<i>ոպլ</i>
<i>պլապլ</i>	<i>սապլ</i>	<i>սար</i>
<i>պլար</i>	<i>սնպլ</i>	<i>ընպր</i>
<i>պլաս</i>	<i>պլոս</i>	<i>պաս</i>
<i>պլապ</i>	<i>պլոպ</i>	<i>ընպիլ</i>




լ  
 ս ա ր ո պ լ ի ս գ կ վ  
 ուս ար ապ ախ ագ որ ոս ոխ ոպ ոգ  
 գա իսա իսո  
  
 պագ  
 սոխ  
 խոխ  
 գոխ  
 գոր  
 գաս

գոս  
 սոպ  
 գոգ  
 որս  
 ոսպ  
 արս



լսովս գար սագ իսպ սար  
 սագ պագ լսով գոգ սովս  
 սախ արդ արալ արս

կ կ  
 ակ ոկ ավ կա գա ով ոկ վո ակ  
 արգ վար կով կագ վագ  
 խով արկ խոր կար գով  
 վախ սով սոր վար կով



ե

ս ա թ ո պ լ ս գ կ վ ե հ ս ա թ ո պ  
եա ես եթ եպ եհ եկ եվ հա հո ահ  
խեր խար  
գեր վահ  
հեր վեհ  
սեր հոր  
վեր հաս  
խոր երկ  
սեխ  
գահ վահ վեհ հով հար կար վեր կեր  
կապ սահ գոհ հաս սեր հեզ հեր  
հարկ գորդ կարդ խորխ սոսկ հերկ  
վարկ պարկ խարկ վարս հարս պարս



եւ

աւ եւ սաւ կաւ սեւ խեւ խաւ գաւ

հաւ խաւ

խաւար

կաւար


բաւեւ

աւեւ

աւագ

կաւգաւ

պաւգաւ



հաւ



պար խաւ գաւ հաւ պահ

հ

հու աւ գեր կար վեր կեր  
հով գեր  
պահ հոդ  
հոս հար  
վար հեր  
պեխ պոգ  
երգ խոհ

լ

ս ա թ ո պ լ ս գ կ վ ե հ ս ա թ ո պ  
ալ ոլ ետ ոտ տա լա ել  
տալ գալ կալ արտ հատ վար վատ  
ելակ լապ-տեր հաւատ սար-հատ



սալոր


պալատ

հասաւ

իլ իր իկ

կիր գիր վիր

սիրտ, սերտ,



ելակ

տերեւ

կապերտ

աւել

ի

պի գի տի

իր սիլ սիր

արտ, հաստ, սաստ, լաստ,

ելակ, կոպիկ, պիտի, սիտի,

պարիկ, կապիկ, տոտիկ,


կարագ, վարագ, սիրակ,

վիրալ, տարի, գարի,

հատիկ, հաւիկ, կահեր,

սալարկ, պարարտ,

հասաւ, հատոր,



տապակ

տ

ս ա թ ո պ լ ս գ կ վ ե հ ս ա թ ո պ

ալ ոլ ետ ոտ տա լա ել

հաստատ, լաստակ,  
վաստակ, կատակ,  
սարոր, խորոր,  
խորոտ, որոտ,  
որոր, կորոտ,  
լապտեր, տապար,

վերեւ

աւել

լորիկ

հատու

պի գի տի

իր սիլ սիր

արտ, հաստ, սաստ, լաստ,

ելակ, կոպիկ, պիտի, սիտի,

պարիկ, կապիկ, տոտիկ,

կարագ, վարագ, սիրակ,

վիրալ, տարի, գարի,

հատիկ, հաւիկ, կահեր,

սալարկ, պարարտ,

հասաւ, հատոր,


**թ**  
 ո պ լ ս գ կ վ ե հ ւ լ տ ի թ ո ւ ը  
 թա թո թի աթ առ եռ իռ ռա ռի  
 թառ թոռ թիռ թել թալ րոռ լաթ կեռ  
 թախտ, լեռկ, թորկ, կարթ, վարկ, կիրթ,



կիթառ	աւել	տառեխ
տիսոս	թորոս	առակ
կարագ	վառեակ	սարեակ
հարպիկ	թերթիկ	խորտիկ
դաւաթ	գոզաթ	կարկառ
թաւալ	թաթառ	տաւրոս



**թի**  
 կը ռս ռո վը սօս վօր տօռ թօր հօր  
 ըսի, ըսի ըսիօ, ըսիօ, հետօ, սարօ, պարօ,  
 աւելի կոթօ, գարիի հատօ, կիթառի յարօ՝  
 սարի հովօ, վերի արտօ,  
 պարի երգօ, վերօ վարօ,  
 կաթի սերօ, կովի կաթօ,  
 հաւը թօռաւ, ծառը ելաւ,  
 հովը տարաւ, խոտը կերաւ,  
 պապի թոռը, սէրը հատաւ,





**սակառ** վըրան, սակաւ, տակառ, աթոռ  
 կիթառի յարօ վըրթաւ  
 կովը խոտը կերաւ, թերթիկը հովը տարաւ,  
 վերի արտի հորթը եկաւ, կաթի սերը կերաւ,

**ծ**  
 ս ա ր ո պ լ ս գ կ վ հ ւ լ տ ի թ ո ւ ը  
 ծիր ծոր ծառ ծիղ վաղ ղեկ ծակ ծիլ ծեր  
 ծորակ, ծաղիկ, ծովակ, խաղող, խաղաղ, ծիծաղ,  
 ծառի ծաղիկ, ոսկի ծորակ, ղեկը կոտրած, ծեր կով,  
 ծառը կը ծըլի, սառը կը հալի, ծաղիկը կը ծաղկի,  
 պապի թոռը հորթը արտը տարաւ,

**թաղար****ծով****խաղող**

մաղ միս գոմ համ հոտ մեխ միտ մեր մեծ  
 մարտ, մարգ, միրգ, մոծակ. մախոխ. մարած,  
 մամիկօս հիմա եկաւ, մասիս լեռը տեսաւ,  
 մեծ մաղով մաղել տամ, մատակ կովի կաթը կեր,  
 ծովի երկար ծիրը կը սիրեմ, ծաղկի թերթը հովը տարաւ,


**ծորակ****մկրառ****ծաղիկ**

թերթիկը մըկրատով պիտի կըտրեմ,  
 թող որ ես ալ ըսեմ կարապի երգը,


Պ  
ս ա ր ո պ լս գ կ վ ե հ ւ լ տ ի թ  
ո ք ը ծ զ մ դ ն ը ձ  
դ ա տ ե ն ի թ մ ի  
դ ա ն բ ա ն դ ա ւ ն ե ռ գ ի ն հ ի ն  
վ ա հ ա ն, դ ա ն ա կ, տ ա կ ա ռ,




վ ա ն դ ա կ ը վ ա ր ա ռ ա ւ.  
դ ը ր ա մ ո վ գ ա մ ա ռ ի.  
ս ա ն ը կ ը ր ա կ ի ն վ ը ր ա ն դ ի ր.  
ն ո ր թ ա ղ ա ր ո վ վ ա ր դ ը ա ռ.  
հ ի մ ա դ ա տ ա ր ա ն գ ը ն ա .



տ ա կ ա ռ  
բ  
տ ա կ ա ռ ո վ գ ի ն ի տ ա ր ա ւ  
բ ի բ ա ս ձ ի ձ ա  
վ ա ն դ ա կ



բ ա դ ձ ա դ ի ն ձ բ ի ձ ձ ո ր բ ո ո  
ս ա ն ձ  
բ ա ր ձ  
դ ա ր ձ  
ձ ա գ ա ր  
բ ա ր ձ ի կ



բ ա դ  
տ ա ն ձ ի ն ծ ա ռ ի ն տ ա ն ձ ե ն ի կ ը ս ե ն .  
բ ա ր ը ս ա գ ի ն ն ը մ ա ն կ ը ս ե յ .  
ն ա ւ ա կ ը ե տ դ ա ր ձ ա ւ . հ ա ւ ը վ ե ր թ ը ո ւ ա ւ .



Փ  
ս ա ր ո պ լս գ կ վ ե հ ւ լ տ ի թ  
ի թ ո ւ ը ծ զ մ դ ն ը ձ ա փ չ ո ւ  
ա փ ո չ ա չ վ ո ր չ ո ր վ ա խ չ ա փ փ ի ր  
չ ի ր, վ ի ո ր ի կ, վ ի ե ս ա տ, տ ե տ ր ա կ, կ ա կ ա չ  
վ ա փ ա գ, կ ա ր մ ի ր, կ ո կ ի կ, տ ը ն ա կ, թ ա թ ի կ,



կ ա ր կ ի ն

ա ր ե ւ ը դ ե ռ չ ե լ ա ւ .  
վ ա ր չ ո վ կ ա թ բ ե ր .  
ա ւ ե լ ի ն կ ո թ ը վ ո ր թ ա ւ .  
ա ն ն ի կ ը վ ե ր չ ե կ ա ւ .  
գ ի ն ի ն չ ա փ ո վ չ ե մ բ ե ր ա ծ .  
դ ա ն ա կ ը լ ա ւ չ ի կ ը տ ր ե ր .



չ ո ր ս ա լ ո ր ը կ ը ս ի ր ե մ .


վ ա ր չ

ա ս ի կ ա հ ը ր ա ն դ ի ն ս ա շ ն ա կ ի ն չ ի ն ը մ ա ն ի ր .  
ո ւ

դ ո ւ լ ո ւ ս ո ւ բ ո ւ ն ո ւ ո ւ ը ո ւ ո ւ ո ւ  
ս ո ւ ը, դ ո ւ ը, կ ո ւ ը, թ ո ւ ը,  
ս ո ւ լ ի չ, գ ո ւ պ ա շ, վ ա փ ո ւ կ,  
խ ո ւ ը ձ, հ ո ւ ը, ո ւ ը, ս ո ւ ը,  
ո ւ ը ո ր ե ր թ ա մ հ ե տ ը ս ե կ ո ւ ը .  
ե ր բ մ ի խ ո ս ի ր կ ը ս ե մ լ ո ւ ո ւ ե ղ ի ր .




ձ ո ւ կ ի մ ս ա շ ն ա կ ը ս տ ե մ ն ե մ .




կ ա կ ո ւ ղ վ ա փ ո ւ կ  
թ ա թ ի կ ո ւ ն ի ս .

խ ո ւ ը

զ  
ս ա ր ո պ ի ւ գ կ վ ե հ ւ լ տ ի թ ո ը ծ  
շ մ դ ն բ ձ փ չ ու զ ե ո շ  
ազ զ ա ո զ ե զ ի լ զ ի ս վ ե ր ձ ե ր մ ե ր դ ե ր



զերթ  
մերթ  
կուզ  
թուզ



սաւառնակ, զանգակ, զիստ, զմելի  
զանազան, զարմանազան, արեգնազան  
զատկի առտուն մեր տունը եկուր

պըզտիկ զանգին  
պըզտիկ ձայնը




հինգ ու ունիմ  
սեւ մազերով

աշ շա շի եշ ուշ վաշ թուշ  
փուշ շուտ շատ շուն նուշ



նաւակ  
շագանակ  
շան նըման հաւատարիմ կենդանի չիկա  
շոգենաւին ետեւը նաւակ մը կար  
շատ վազողք շուտ կը հասնի



շոգենաւ

ճ  
ս ա ր ո պ ի ւ գ կ վ ե հ ւ լ տ ի թ ո ը ծ  
ը ծ դ մ դ ն բ ձ փ չ ու զ ե ո շ  
ոյ ոյը այ էյ յի յա յո էշ էշ չէ էն էի էգ  
վայ բայ հայ թէյ այն հէյ այս այդ մէկ



հայր մայր վայր ծայր տէր  
տիրայր, թէյաման, յակինթ,  
դուն ալ խըմէ թէյ մը.  
էշ յամառ կենդանի է.



հեռաձայն այս տեղ բեր գաւաթը  
հայաստանը հայուն է կըսէր հայրիկըս  
հայու տըղուն ով չէ հաւներ

ոյ

լոյս խոյր բոյր թոյր բոյն թոյն գոյն  
համբոյր, մակոյկ, թակոյկ, խարոյկ,  
ծաղիկները անոյշ բոյր ունին.  
մակոյկը կը ուհի գետնին վըրա.




այս դոյլը պարապ է,  
թուշոնի բոյն մը գըտայ,  
մէկ ողկոյզ խաղող ունիմ,  
տասը հատ ընկոյզ կերայ,



ողկոյզ

այդ բոյնը աւթելը անգութ գործ է.  
բարի լոյս կըսեմ ընկերներուս ամէն առտու  
երը դասարանէն ներս կը մտնեմ:

*Ժ*  
 ս ա ր ո պ ի ս գ կ վ ե հ ւ լ տ ի թ  
 ո ը ծ զ մ դ ն բ ձ փ չ զ շ յ է ժ ց  
 ժա ց ա ց ի ժ ի ց ու ժ ե ր ա ր ժ վ ա ր ժ շ ա ր ժ  
 ց ա ւ ց ե ց կ ի ց կ ո յ ժ ց ո յ ց ժ ա մ կ ա ր ժ ի ս ո ց



ձ ա զ ա ր, փ ո ղ ո ց, կ ա ց ի ն ժ ա ց ա ն  
 ժ ա մ ա ց ո յ ց, վ ա ր ժ ա ր ա ն, հ ո վ ա ն ո ց  
 մ ե ծ մ ա յ ր ի կ ը ա ռ ա ն ց ա կ ն ո ց ի  
 կ ա ր չ ի կ օ ր ն ա ր կ ա ր ե լ.

ա կ ն ո ց

ա յ ս ա ռ ա ռ ու ժ ա մ ը վ ե ց ի ն լ ո յ ս ը ծ ա զ ե ց ա ւ.

ա ս ի կ ա մ ե ծ հ ա յ ր ի կ ի ն դ ը ր ա պ ա ն ի ժ ա մ ա ց ո յ ց ն է.

մ ե թ դ ր ա լ ո ց ի ժ ա մ ա ց ո յ ց ը շ ա տ բ ա ր ձ ը ր  
 կ ը հ ը ն չ է.

մ ա յ ր ի կ ը ս ի ր ժ ա մ ա ց ո յ ց ը դ ա ս տ ա կ ի ն ա ն ց ու ց ա ծ է.



ժ ա մ ա ց ո յ ց


հ ա յ ր ի կ ը խ ո ս տ ա ց ա ւ ո թ ա յ ս ի ր ի կ ո ւ ն ի ն ծ ի հ ը ա յ ա ն մ ը բ ե ր է. ժ ի ր ա յ ր ը խ ո շ ո թ տ ո ւ փ մ ը ո ն ի, ա ն ո թ կ ա վ ա ր ի չ ի ն վ ը ր ա յ գ ե ղ ե ց ի կ պ ա տ կ ե ր մ ը կ ա յ.



հ ը ա ց ա ն

ց ո յ ց տ ո ւ թ ի ն ծ ի խ ա ղ ա լ ի կ ն ե ր ը դ, ե ւ ե ս ժ ա պ ա ւ է ն ի ս ծ ա յ ր ը մ ի ն չ ե ւ հ ո դ ե ր կ ա ր ե մ. շ ո ւ շ ա ն ի կ ը գ ի շ ե ր ց ո ր ե կ ժ ա ն ե ա կ կ ը հ ի ւ ս է.

*Հ*  
 ս ա ր ո պ ի ս գ կ վ ե հ ւ լ տ ի թ  
 ո ը ծ զ մ դ ն բ ձ փ չ զ շ յ է ժ ց  
 լ ը բ օ



փ ա կ ա ն ք

ք ա ջ, ք ա թ, ջ ի դ, ք ո դ, փ ո դ,  
 ջ ո ւ թ, ջ ե ր մ, ք ո ւ թ ջ, շ ա թ ք,  
 փ ա կ ա ն ք, շ ո ւ թ ջ ա ո, ա ղ ջ ի կ,  
 ք ա թ ք ա ր ի վ ը թ ա յ չ ի մ ը ն ա ց,  
 ց ո ւ թ ս ե ն ե ա կ ի մ է ջ մ ի կ ե ն ա ր:  
 հ ը ա ն դ ը շ ա տ ք ա ր ի տ ղ ա յ է:

ջ ե ր մ ա չ ա փ




1182-69

ջ ո ւ թ ի խ ո շ ո թ ա ռ ու մ ը կ ը հ ո ս ի ջ ա ղ ո ց ք է ն ն ե ր ս, ե ւ կ ը դ ա ր ց ո ւ ն է ա ն ի ւ ն ե ր ը:  
 ք ա ր ի ն տ ա կ է ն մ ի ջ ա տ մ ը դ ո ւ թ ս ե լ ա ւ ե ւ մ ե զ վ ա խ ց ո ւ ց :

Օ

օ դ, օ ձ, օ ր, օ ր օ ր, ա ր օ ր, օ տ ա ր, ա ր օ տ  
 ա յ ս օ ր ք ա ն ի ա ն գ ա մ ի ն կ ա ր: օ դ ը լ ե ց ո ւ ն  
 է փ ո շ ի ո վ: օ շ ի ն ը ի ր  
 օ դ ա պ ա ր ի կ ը կ ը  
 թ ը ց ո ւ ն է: ա ր օ ր ի ն  
 խ ո փ ը ա ր ծ ա թ ի  
 պ է ս կ ը փ ա յ լ է ր  
 ա ր ե ւ ի ն մ է ջ: գ ա ր ու  
 ն ը տ ա ր ւ ո յ ն ա մ է ն է ն  
 գ ե ղ ե ց ի կ ե ղ ա ն ա կ ն է:



ա ր օ ր



օ դ ա պ ա ր ի կ

Ճ

ս ա ր ո պ ի ս գ կ վ ե հ ւ լ տ ի թ ո ը ծ զ  
մ դ ն բ ձ փ չ ժ շ է ջ ը օ ճ Փ  
Ճայ, Ճիգ, Ճիտ, Ճար, Ճաշ, Ճաճ, Ճար,  
Ճուտ, Ճիշդ, Ճիւղ, Ճանձ, Ճորտ, Ճուրճ,




Ճամբայ, մահիճ, Ճերմակ, արճիճ  
Ժամացոյցին Ճօճանակը շատ արագ  
կերթայ կուղայ:  
շաքարը կը շինեն Ճերմակ Ճակըն-  
մուրճ դեղէն եւ շաքարեղէգէն:  
վարդենիին Ճիւղերուն մէջ սոխակի գեղեցիկ բոյն  
մը կայ:

Ճազարը Ճիւնի պէտ Ճերմակ մուշտակ ունի վըրան:  
քարակոփը մուրճով կը կոփէ քարը:

Փ

օֆ, ուֆ, Փոշալ, Փռոթ  
Յուլիոի տաք օք մըն էօ,  
—Օ՛ֆ, այս ինչ տաք է այսօր,  
սսաւ տիկին աղաւնին: Այդ  
պահուն խոշոր շուն մը Փռ-  
շալէն եկաւ իր ոտքերուն  
տակ ինկաւ:  
—Ույշ, Փինօն է, ըսաւ, տաքէն մեռաւ:  
Եւ իրաւ այդ օքը շատ տաք էօ:



Ճակընդեղ



ուա

ուո

ուէ

կապուած  
հատուած  
կարուած  
քակուած

աղուոր  
ժամուոր  
հաշուոզ  
տարուոզ

պատուէր  
նուէր  
աղուէս  
թաղուէր

ուի

բացուիլ  
գոցուիլ  
հագուիլ  
կապուիլ  
աղուէսը

ուե

բացուեր  
գոցուեր  
հագուեր  
կապուեր

աղուէսը

խորամանկ կենդանի է:  
Ճայնաւոր գիրեր  
ա, ե, է, ի, ո, օ, ւ, ու, եւ,  
իւ, իւր, իւն, իւղ թիւն,  
թիւ, պատիւ, անիւ, գրիւ. հաշեւ կոիւ,  
սօսափիւն, հնչիւն, շաշիւն, բախիւն, շառաշիւն  
քարիւղ, հնդկախիւղ, շուշմախիւղ, վարդախիւղ,  
քաջութիւն, յաղթութիւն, շինութիւն, լիութիւն  
զեփիւու, պորփիւու, իւրաքանչիւու, համասփիւու,  
Վըուս եւ Յարութիւն հարիւու անգամ առուակին  
վրայէն ցատկեցին առանց իյնալու:

Վըծիւը իր բոյնը բարձր սարերու գազաթը կը  
շինէ, որպէսզի արծուիկները ապահով մեծնան:





## ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նոր տարի է այսօթ:  
Հին տարին երթայ բարով:  
Դպրոց գացի մեր վաթուհին շնորհաւորելու, ա-  
մէնքը եկած էին եւ ինձի պէս մէյ մէկ սիրուն նուէր  
բերած:

— Շնորհաւոր նոր տարի տղա՛քս, ըսաւ օրիորդ Աստ  
դիկը:

— Եւ բարի կաղա՞նդ, գոչեցի ես:

Դոլոր խնդացին, օրիորդ Աստղիկն ալ ինսգաց ու  
այտերս շոյեց:

Սուրէնը կաղանդ՝ պապա եղաւ, եւ մենք երգեցինք  
նոր տարիին երգը:

Յետոյ օրիորդ Աստղիկը մեզի նուէրներ տալով  
կանուխ մը արձակեց:



## ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ



Ո՛չ ձիւնին վըրայէն  
բանալով ակօս,  
Չեր քովիկն ահա՛  
շուտ մը կուգամ հոս,  
  
Երբ զանգակներըս կը հընչեն  
ուժգին,  
Եւ ձեր դըռնէն ներս մըտնէ  
ՆՈՐ ՏԱՐԻՆ:

Մեծին ու փոքրին, ամէնո՛ւն համար,  
Լեցուն օրհնութիւն ունիմ անհամար,  
Կըրնաք ամէնքըդ շահիլ մէյմէկ գանձ,  
Երբ զիս ընդունիք ձեր քով Անսախանք:



Տարին տասներկու ամիս ունի, յունվար, փետրվար,  
մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպ-  
տեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

Յունվարի առաջին օրը կաղանդ կըլայ: Հայաստա-  
նի ժողովուրդը այդ օրը իրարու նուէրներ կուտայ:



## ՍԱՆԴՈՒՂԸ

Պատնիվեր սանդուղ մը դրուած էօ:

Թէեւ սանդուղին բոլոր աստիճանները արժէքով հաւասար էին իրարու, բայց ամէնէն վերի աստիճանը հպարտութիւնով կը նայէթ ներքեւի աստիճաններուն վրայ:


Մարդ մը սանդուղին մօտէն անցած առեն նշմարեց այդ բանը, եւ բոնածին պէս գլխիվայր դարձուց: Եյսպէս, հպարտ աստիճանը ինկաւ ամէնէն ցած տեղը:



## ՀԱՄԲՈՅՐԸ

Երեք համբոյր ունիմ տալիք,  
Ըղուոր, համով, երեք պաչիկ,  
Է՞ն տաքուկը իմ բարի հօր,  
Է՞ն անուշը իմ մեծ եղբօր,  
Է՞ն երկարը, գիտէք որի,  
Է՞ն մայթիկին կը վիճակի:

## ԱՔԼՈՐԻՆ ԵՐԳԸ



Կուկուլի՛կու,  
կուկուլի՛կու,  
Ե՞րգէ արլոր  
առտուն կանուխ,  
Կուկուլի՛կու,  
կուկուլի՛կու,  
Ելէ՛ք տըղաք  
առտուն կանուխ:  
Երեւն ահա՛  
կը փալփռայ,

Չորս դին ամէն բան կ'արթըննայ,  
կը մայէ գառն մէ՛, մէ՛, մէ՛,  
Մօտի դաշտէն մշակն երգէ,  
“Օ՛ն արթընցէք, սիրուն տըղաք,  
“Օ անգակն հընչեց տա՛ն, տա՛ն, տա՛ն,  
“Չեք դասերէն ետ մի՛ մընաք,  
“Շուտ ըսկըսէ՛ք աշխատութեան”:

Խնչ որ կը սորվինք օրօրոցին մէջ մինչեւ գերեզման կը տեւէ:




## ՈՎ ԳՏԱԾ Է ՀԱՅԵՐԵՆ ԳԻՐԵՐԸ

Այսօր Երան եւ Զաւէնը զպրոցին մէջ կը վիճէին:  
— Զաւէն գիտե՞ս ով գտած է հայերէն գիրերը, հարցուց Երան:

— Ո՞չ պատասխանեց Զաւէնը:

— Ե՞ս գիտեմ ըսի, իմ հայրիկս սորվեցուց ինծի, որ մեր գիրերը գտած են Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոց հայրապետները: Եթէ մենք զիր չունենամ ինք, ի՞սկզիս զիտի կրնայինք հայերէն գրել եւ կարդալ: Հայրիկս ըսաւ թէ, եթք տղայ մը գրել եւ կարդալ սորվի, ամենէն առաջ սորվելու է մեր գիրերու հեղինակներուն անունները:

Օրիորդ Խստղիկը լսեց մեր խոսակցութիւնը, եւ շատ գովեց զիս, որովհետեւ ընկերներուն կարեւոր բան մը սորվեցուցիր էի:



## ԳԻՏՑԻՐ ԹԷ ՈՎ ԵՄ ԵՍ

Տղան - Ես մարդ  
մըն եմ, գիտցիր թէ  
ո՞վ եմ:

Եղջիկը - Հաց կը ը-  
նա՞ս շինել:

Տղան - Ես հացա-  
գործ չեմ:

Եղջիկը - Կոշիկ կը ը-  
նա՞ս շինել:


Տղան - Ես կոշկակար չեմ:

Եղջիկը - Կուագ կը նա՞ս զարնել:

Տղան - Ես երաժիշտ չեմ:

Եղջիկը - Ելիւթ կը նա՞ս շինել:

Տղան - Ես ջաղացպան չեմ:



Եղջիկը - Ըսէ՛ ուրեմն, ի՞նչ  
կը նաս շինել:

Տղան - Յորեն կը բուացնեմ:

Եղջիկը - Հասկցա՞յ թէ դուն ով ես, ագարակապան  
մըն ես ուրեմն:

Տղան - Եյո՛, ագարակապանն եմ, հացագործ եւ  
ես կուտանք ձեր կերած փափուկ հացը:

Զուրը գայ ջաղացըն աղայ,  
Խենթըն ուտէ, ելլէ խաղայ:

## ՀՕՐԱՔՈՅՑԻՆ ՊԱՏՄԱԾԸ

Պղտիկ ճրագ մը կոս, այն-  
քան պղտիկ, որ թիզ մը տեղ  
հազիւ կը լուսաւորէք: Բայց այդ  
պղտիկ ճրագը, մեծ հպարտու-  
թիւնով պօռաց իրիկուն մը.



— Եյս ի՞նչ պայծառ լոյս ունիմ, բոլորը  
պիտի նախանձին իսծի:

— Լուսինը, որ ծառի մը ետեւ կը հտնգչէք  
այդ պահուն, դուքս հանեց զլուխը եւ բարու-  
թեամբ ըստաւ. —

— Եյս, պղտիկ լոյս մը ունիս փոքրիկ ճրագ, բայց  
մի՛ մոռնար որ իմ հեռս չես կընար չափուիլ, ոչ ալ  
արեւին:

— Չայնդ կտրէ՛ պատասխանեց մեծ խօսիկ ճրա-  
գը, ինձմէ աւելի փայլուն բան չկայ:

Իրիկուան հոգը լսեց այս վէճը, ու բարկացած ը-  
ստաւ,

=Գիտցիօ՛ պղտիկ հպարտ, որ իմ շունչես ոչ ա-  
ռեւը մարած է, ոչ լուսինը, բայց մէկ փշելով կը մարեմ  
ըեզ:

Ու “փո՛ւֆ” սրածին պէս մարեց,



## ԿԱՂՆԻՆ ԵՒ ԲԱՂԵՂԸ

Հաստ կաղնիի մը շուքին տակ բաղեղ մը բուսաւ,  
եւ այնքան շուտ մեծցաւ, որ քանի մը ամիսէն գրե-  
թէ ծառին գագաթը հասաւ:

Օ՞ր մը բաղեղը հարցուց կաղնիին,  
— Քանի՞ տարեկան ես գրացի:  
— Հարիւթէն քիչ մը աւելի, պատասխանեց կաղնին:  
— Հարիւթ տարի՞, պօռաց բաղեղը, ի՞նչ դանդաղ ա-  
ճող ես եղեք դուն, վրաս նայէ՛ ։ Ես տակաւին մէկ տարե-  
կան չկամ, եւ գրեթէ քեզի չափ հասակ ունիմ:  
— Ճիշտ է, ըստ կաղնին, ես հարիւթ տարի ապրեցայ  
այս բարձրութեանս հասնելու համար, բայց տեսայ  
հարիւթէ աւելի բաղեղներու ծնիլը եւ մեռնիլը: Եւ ես  
գեռ կ'ապրիմ ու կը մեծնամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ

Ըրարատ, Սիփան, Վարագ, Տաւրոս, Ծրագած,  
Ծիւրակն, Կորդիք, Նեմրութ, Գրգուր, Վոնոս, Վրտոս:



## ԱՌԱՋԻՆ ԶԻՒՆԸ


Եթէկ իրիկուն երբ Ալիսենց տունէն կը դառնայինք, հօրաքոյթը ըսաւ. “կարծեմ այս գիշեթ ձիւն պիտի գայ”: Այս առաւտ պատուհանէն տեսայ որ, իռա՛ւ ձիւն տեղացեթ էր գիշեթը, եւ ծածկեթ էր, տանիքնեթը, ծառեթն ու փողոցնեթը:

Ինչէ՞ն գիտցաւ հօրաքոյթը թէ, այս գիշեթ ձիւն պիտի գար:

Ալիսը եկաւ այսօր ինծի հետ խաղալու: Սահնակով լաւ զբոսանք մը ըրինք՝ վարը, փողոցին մէջ: Բայց շատ մսեցանք, մեթ կոշիկներուն մէջ ձիւն զացեթ էր, եւ մեթ ձեռնոցնեթը լաւ մը թօջեթ էին, երբ տունէն ներս մտանք:

Հօրաքոյթը մեզի տաք կաթ եւ կարկանդակ տըռուաւ:

Ի՞նչ աղուոր օր մըն էր այսօր, ձերմակ, մաքուր ձիւնը լոյսի պէս տարածուած էր ամէն կողմը:



Աքարատ լեռը որ Մասիս ալ կը կոչուի, հայաստանի ամէնէն բարձր լեռն է:



## ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ ՀԱՃՈՅՔԸ

Մեծ հայրիկը շուկայ կ'երթայ ամէն առաւտօտ, եւ երեկոնեթը տուն կը վերադառնայ:

Վ'ուզեմ որ իրեն անպատճուռ “երթաս բարով” ըսեմ:

Մեծ հայրիկը շատ հաճոյք կը զգայ, երբ իր ետեւէն կը պօռամ.

— Մեծ հայրիկ, երթաս բարով, իրիկունը կանուխ տուն եկութ:

Իտին կը դառնայ, կը ժպտի եւ գլուխը կը շարժէ, գիտէ որ երբ կանուխ տուն գայ, բոլորս ալ ուրախ կ'ըլլանք:

---

Այսօր դարձեալ ձիւն կը տեղայ, երբ դպրոցէն տուն կը դառնայի, օձիկիս վրայ խոշոր բաթիւնեթ կ'իյնային, շուտ շուտ քալեցի որ ցոյց տամ հօրաքոյթին, բայց երբ տունէն ներս մտայ, բոլորը անհետացեթ էին:


Գիտէք ինչու:





## ՓՈՔՐԻԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Օ՞ն քնկեռներ մենք քալենք,  
Ըստագ, արագ միշտ քալենք  
Քալենք քաջ զինուորի պէս,  
Երգեր երգենք մենք պէս պէս:  
Ոչ պըզտիկ ենք, ոչ ալ մեծ,  
Տարիքնիս է հինգ կամ վեց,  
Առ ցատկենք ուրախ զուարթ,  
Մեր սըրտերն թող հըրձուին արդ:  
Պըտըտիկ մանուկներ ենք,  
Պարտէզի ծաղիկներ ենք,  
Գիտենք պարել ու ցատկել,  
Թողոչունի պէս ոստոստել:



## ԱՆՄԵՂ ԳԱՌՆՈՒԿԸ

Մայիսի տրեւոտ օր մըն էր:  
Փողըիկ, ձիւնի պէտ սպիտակ գառնուկ մը կեցեր  
ծառին տակ, մէ՛, մէ՛, կուլար:  
Շերմակ, առատ բուրդերով մայթ-ոչխարը, որ կ'ա-  
ռածէր անդին մարգագետնին մէջ, լսելով գառնուկին  
ձայնը, քովը վազեց ու հարցուց.  
=Ի՞նչ եղաթ ձտգուկա, մէկ տե՞ղդ կը ցաւի:  
=Եսո՛ մայրիկ, պատասխանեց գառնուկը, չար մարդ-  
մը ասկէ կ'անցնէր քիչ մը առաջ, երբ տեսաւ որ ցան-  
կապատին փաթթուած ծաղիկները կը կրծէի, թաթիկ-  
ներուս այնպէս զարկաւ, այնպէս զարկաւ որ, քիչ մը-  
նաց ցաւէն մեռնէի:  
=Եպերա՛խտ մարդիկ, պոռաց մայթ-ոչխարը, կաթս կը  
խմէք, բուրդս կը խուզէք, վազը միւս օր զիս ալ կը  
մորթէք ու միսս կ'ուտէք, ու տակաւին թոյլ չէք տար  
որ սա ձագուկս քիչիկ մը խոտ ուտէ: Ու գառնուկը  
առջեւն առած, տարաւ գէպի մարգագետինին խորեօք:



## ՄԵՂՈՒՆ ԵՒ ԲԶԵՋԸ

Պղտիկ մեղու մը պարտէզին մէջ կը թռչստէր ծաղկէ ծաղիկ: Անիկա կ'այցելէր ամէն ծաղկի, եւ անոնցմէ մեղը կը քաղէր:

Բզէզ մը որ կը դիտէր մեղուն, ըստ: — Բարեկամ, լսած եմ թէ ծաղիկներ կան, որ թոյն ունին իրենց մէջ, մինչդեռ դուն բոլոր ծաղիկնե-

րուն ալ կ'այցելեա, չե՞ս փախնար:


— Ո՛չ, պատասխանեց մեղուն, իրաւ է որ բանի մը ծաղիկներ թռնաւոր են, բայց, իւս սաքանչիւր ծաղիկ լաւ

բան մը ունի իր մէջ, ես զգուշութեամբ լաւ բանեօք միայն կ'առնեմ իրենցմէ, եւ թոյնին չեմ դպչիր:



Հարցում — Գիտէ՞ք թէ ինչ գոյն ունին վարդը, մանիշակը, կակաչը նարդէսը եւ մեխակը:

Ի՞նչ կ'ըսեն վարդին եւ մանիշակին գոյնին:



## ԵԼԵԻԵՋԸ

Ես ու Գոհարիկը շատ կը սիրենք ելեւէջ նստիլը:

Մեր խեղբանքով, հայրիկը հատ մը պատրաստել առւաւ պարտէզին ծայթը, եւ ամէն իրիկուն, դըպրոցէն դարձին, կը հեծնենք վրան ու վե՛ր-վար, վե՛ր-վար կ'ելլենք ու կ'իջնենք: Եօթեմն մեր շնիկը, Նինօն ալ կ'ընկերանայ մեղի, ու կշիռ կուտայ մեր ելեւէջին:


Հայրիկը գոհ է մեղմէ, եւ հաճոյքով կը դիտէ մեզ, երբ մենք կը զբունունք:





## ՀԻՆԳ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Կելոր սալորի մը կը նըմանցընեմ հաստըլիկ  
Բութ-մատըս Ճարպիկ,  
Խոկ ս'ա, համարձակ ցոյց կուտայ արագ  
Ըմէն բան իթ շութջ, կոչուի Ցուցամատ:  
Միջնամատըս հըպարտ հասակովն իթ մեծ,  
Ըփիս Ճիշդ մէջտեղն ուղիղ բարձրանայ:  
Չորրորդը կը զոհար աղամանդ,  
Զարդարուն հարս մընէ, կոչուի Մատնեմատ:  
Շկոյթը թըզուկ, անոր շուքին տակ  
Հանգիստ կը մընայ ամէն ժամանակ:  
Հինգ բարեկամներ, որչա՛փ տարբեր են,  
Բայց երբ միանան, ձեռք մը կը կազմեն:



## ՈՒՐԱԽ ՕՐ ՄԸ

Եյս առաւօտ թոշուններու ձայնէն արթնցայ:

“Ենպատճառ գարունը եկած է”, ըսի միտքէս, ու վեր  
ըսի վարագոյսը, ի՞նչ տեսնամ, գոյն գոյն թոշուններ  
Ճիւղէ Ճիւղ կը թոշըտին:

—Մեծ հայրիկ, գորունը եկեր է, պոռացի անհամբեր:


—Ինչէ՞ն գիտցար, հարցուց մեծհայրիկը:

—Թոշունները վերադարձեր են, պատասխանեցի, տես  
խումբերով կը պտըտին պարտէզին մէջ, եւ օդը լեցու-  
ցեր են իրենց երգերով:

Մեծ հայրիկին հետ պարտէզ իջանք, սարեակը կ'եր-  
գէր ծառին գտգաթը թառած, կարմրալանջեր կ'ոստոս-  
տէին խոտերուն վրայ եւ կը լողային արեւին մէջ:  
Փայտփորը իթ կտուցը կը դաքնէր կեռասենիին հաստ  
Ճիւղերուն, եւ սկիւռները իրենց փափուկ պոշը ցցած  
ծառէ ծառ կը վազէին:

Մեծ հայրիկը հաւատաց որ իրաւցընէ գարունը ե-  
կեր է:





## ՓՈՔՐԻԿ ԴԱՇՆԱԿԱՐԾ

Մարօն դեռ ուժ տարեկոն է, եւ արդէն երաժշտառվթեան գասեր կ'առնէ իր մօքմէն: Ամէն իրիկուն, ընթրիքէն յետոյ, Մարօն կ'անցնի դաշնակին առջեւ, եւ իր դասը աւարտելէ յետոյ, ոնպատճառ կը նուազէ “Հայաստան երկիր դրախտավայր”ը, իսկ մայրիկը կ'ընկերանայ իրեն, ու տունք ամբողջ կարծես կը լեցուի երգով:

Ենդին, հայրիկը թիկնաթոռին մէջ բազմած, կը զմայլի իր փոքրիկ Մարօյին մինինիկ թաթիկնեթուն, որոնք վաթ մարդու մը պէս կը տանի ու կը բերէ ստեղնաշաքին վրայ: Ու միտքէն կ'ըսէ, “ի՞նչ բաղդառը հայր եմ?”



## ԱՆՄԻՏ ԵՃԸ

Էշ մը վրան աղ բեռցած առուակի մը մօտ հասա, եթք կ'ուզէր մէկ կողմէն միւսը անցնիլ, յանկարծ ոտքը սահեցաւ եւ ջուրին մէջ ինկաւ:

Ի՞ր տէրը, որ իր ետեւէն կուգար, դժուարութեամբ դուքս հանեց կենդանին, բայց աղին կէսը հալած էք:

Էշը տեսաւ որ, բեռը թեթեցեր է, ու քալելու դժուարութիւն չէթ կրեք ալ,

— Վաս ի՞նչ ազուոր բան եղաւ, ըստ միտքէն, այս բանը չը պիտի մոռնամ:

Ութիշ օր մը սպունգ բեռցած նոյն տեղէն կանցնէր, միտքը ինկաւ իր առջի յաջողութիւնը, եւ դիտմամբ ոտքը սահեցնելով ջուրին մէջ գլառըեցաւ: Բայց ըսպունգները ջուր ծծելով ծանրացան ու էշը ջուրին տակ իջնելով խեղդուեցաւ:



## ԱԳԱՂԱՆԸ ԵՒ ԱԴԱՄԱՆԴՅ

Եգաղաղ մը կը քըրսէթ հաւ-  
նոցին շուրջ դիզուած աղբի  
կոյտը, ինչպէս եղաւ աղամանդ  
մը գտաւ մէջէն: Հետաքըրիթ  
հաւեթ մօտը եկան որ տեսնեն  
փայլուն առարկան: Բայց ագա-  
ղաղը պարզապէս յուսախար եղած էր:

— Ի՞նչ գեղեցիկ է, գոշեց ամէնէն տարեց հաւթ, դի-  
տե՞ս թէ աղամանդ մըն է գտածդ, եւ թէ աղամանդ-  
ները շատ սուդ կ'արժեն:

— Հոգս չէ, թէ որբան մեծ արժէթ կրնայ ունենոլ ա-  
ղամանդ մը, պատասխանեց ագաղաղը, աւելի ուրախ  
պիտի ոլլայի, եթէ ատոր տեղ եգիպտացորենի հատիկ  
մը, կամ պարարտ բզէզ մը գտնէի:

Եռած- Մի՛ լինիթ ուրագի պէս,  
միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ,  
Եյլ եղիթ սըղոցի պէս,  
մէկ դէպի քեզ, մէկ դէպի մեզ:



## ԴՊՐՈՑԻ ՕՐ ՄԸ

Հօրեղբայրս զիս գրկելով դպրոց տարաւ այս առա-  
ւօտ:

Սաստիկ հով մը հս՛ւ, հո՛ւ, կը փշէթ:

Եթը դպրոցին մօտեցանք, տեսայ որ հովը թըռցու-  
ցեր էր մարդու մը գլխարկը, եւ անիւի մը պէս կը  
գլտորէթ փողոցին մէջ:

Մարդը կը վազէթ իթ թռչող գլխարկին ետեւէն, եւ  
չէթ կրնաթ բռնել:

Ա եթ նայեցայ, ճերմակ ամպեթ արագ արագ կը թա-  
ւալէին երկնքին երեսը:

« Օ խնելոյզէն ելլող մուխը հեռունեթը կը փախէթ, եւ  
դպրոցին բակին մէջ ցցուած դրոշակը կը լողաթ օդին  
մէջ:

Քիչ մնաց որ մենք ալ հովին հետ եթթայինք:

Ուրիշ աշակերտնեթ ալ մէյ մէկ օգնականով դպրոց  
կուգային, եւ բոլորն ալ մեզի պէս կը տատանէին քա-  
ած ատեննին:

Ոմանք ուրախ ուրախ կը պոռային, եւ մեծ հաճոյք  
կը զգային հովէն:



Եթը դասարան մտանք, ամէնքս պատմեցինք օրիորդ  
Ըստղիկին թէ հովը ինչեր սըաւ փողոցին մէջ:

Օօիորդ Աստղիկը ըսաւ թէ, հովք շատ գործեռ  
կը տեսնէ, եւ երբեմն մարդոց օգուտներ ալ կը բերէ:

—Ո՞վ կրնայ ըսել թէ հովք ինչեր կ'ընէ այս բա-  
ներուն:

Եւ կափճով զբեց գրատախտակին վրայ:  
Հովք ի՞նչ կ'ընէ աւազը,  
ի՞նչ կ'ընէ ծառերը,  
ի՞նչ կ'ընէ տերեւները,  
ի՞նչ կ'ընէ մուխը,  
ի՞նչ կ'ընէ ամպերը,  
ի՞նչ կ'ընէ թռուցիկը,  
ի՞նչ կ'ընէ հովք ծովին վրայ,  
ի՞նչ կ'ընէ հովք նաւերուն առազաստը,  
ի՞նչ կ'ընէ հողմաղացին թեւերը,

Բոլորս հանեցինք մեր տետրակները եւ հաքում-  
ներուն պատասխանները գրեցինք:



## ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՈՒԵՐՍ

—Ուժը տաթեկան պիտի ըլլան այս ամիս Սարօ',  
ըսաւ հօթեղբայրս, ի՞նչ նուէր բերեմքեզի:

—Կոփամարտի ձեռնոց կ'ուզեմ հօթեղբայր, պա-  
տասխանեցի:

Ի՞նչ ուրախութիւն, այս առաւօտ սեղանին վը-  
ռայ պատրաստ գտայ նոփնոր սիրունիկ ձեռնոցներս,  
հօթեղբայրս տուփին վրայ գրեր էր.

### ԱՄԻՒՅՔ

### ՀՅԱՆԻ-ԱՎՐՈՅԻՆ

—Հէյ, հիմայ ո՞վ կը համարձակի քաջ կոփամար-  
տիկ Սարօին հետ մըցիլ:





## ՊԶՏԻԿ ԹՌՉՈՒՆԸ

Եթե պարտէզն էի ամբողջ օրը, հայրիկս ալ եկաւ,  
եւ քիչ մը մասնակցեցաւ խաղերուս:

Խնձորենին ճիւղերուն մէջ շատ մը թռչուններ  
կային ու ճրլուքլացին մինչեւ իրիկուն, ի՞նչ կը խօսէին  
չեմ գիտեր, արդեօք կ'ազօթէի՞ն, կ'երգէի՞ն, թէ այր,  
բէն, գիմ կը սորվէին:


Պղտիկ կապոյտ թռչուն մըն ալ եկաւ, պղտիկ, շատ  
պղտիկ, ահա՝ այս չափիկ, անոնց քով զնաց, ձի՛գ, ձի՛գ,  
ըրաւ ու փախաւ:

Ես ալ այն պղտիկ թռչունն ըլլամու երգե՞մ, ահա՛,  
լո՛յս, լո՛յս, լո՛յս:

## ԶՐՈՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Տարին չորս եղանակներէ կազմուած է, գարուն,  
ամառ, աշուն եւ ձմեռ:

Արնա՞ք ըսել թէ գարնան ամիսները որոնք են, եւ  
այդ ամիսներուն ինչ փոփոխութիւններ կ'ուլան պար-  
տէզներուն մէջ եւ ծառերուն վրայ:



## ԵՐԿՈՒ ԿԱՊԻԿՆԵՐԸ



Երկու կապիկներ կը թափա-  
ռէին գիւղի մը մօտեբը: Յանկարծ  
նշմարեցին ծառ մը, որ ծածկուած  
էր հասուն պտուղներով:

— «Նայէ», ըսաւ կապիկներէն մէ.  
կը իր ընկերոջ, ի՞նչ գեղեցիկ պը-  
տուղներ կ'երեւին,  
եկո՛ւթ քիչ մը ճա-  
շակենք անոնցմէ

— Ոչ, ո՛չ, պա-  
տասխաննց միւսը՝

որ խելացի կապիկ մըն էր, այս ծառը գիւղին այսքան  
մօտ է, եւ պտուղներն ալ հասուն, եթէ ուտուելիք պը-  
տուղներ ըլլային, մարդիկ շատ՝ ոնց քաղած կ'ուլային:  
Թաղունք հեռանանք, վստահ եմ որ ատոնք վնասակար  
պտուղներ են:

— Ի՞նչ անմիտ ես ըստ միւսը, քանի որ այդքան գեղեցիկ պտուղներ են, ըսել է որ անվնաս են, ես այսօր շատ ախորժակ ունիմ եւ պիտի ուտեմ:

— Դուն գիտես պատասխանեց ընկերը, ու գնաց իր ընթերքը ուրիշ տեղ վնտուելու:

Ընմիտ կապիկը քաղեց բաւական պտուղներ, եւ անյագաբար կերաւ: Բայց իր վերջին ճաշը եղաւ ատիկայ, որովհետեւ թունաւոր պտուղներ էին:

Հետեւեալ օրը, խելացի կապիկը երբ դարձեալ մօտ եկաւ պտղատու ծառին, զտաւ իր անմիտ ընկերոջ դիակը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Հայաստանը ունի հարիւրաւոր մեծ ու պղտիկ գետեր, որոնցմէ նշանաւորներն են Եփրատ, Տիգրիս, Երաբս, Շ'որոխ, Ալիս, Մեղրագետ, Սեւ գետ եւ Հրազդան: Եյս գետերէն մաս մը կ'երթան կը թափին հեռաւոր ծովեր, իսկ ուրիշ մաս մըն ալ կը մնայ մեր հայրենիքին մէջ, ու կը պտղաբերէ զայն:




## ՄԵՂՈՒՆ

Օք մը մեղուն հարցուց մարդու մը «կայ» ուրիշ կենդանի մը, որ այնքան լաւ բարեկամ ըլլայ մարդուն, ինչպէս ես եմ: Վտածէ՛ անգամ մը, որ մեր շինած բոլոր մեղը եւ մոմը մարդուն համար է միայն»:

— Եյո՛, ոչխարը կայ, պատասխանեց մարդը, եւ գիտցիք որ անիկայ քեզմէ աւելի լաւ բարեկամ մընէ մեզի՛: Մենք կրնանք առանց մեղը ուտելու ապրիլ: Բայց եթէ ոչխարը չըլլար, ձմեռուան տարուկ հագուստներէն էք զրկուէինք: Ետկէ զատ ոչխարը իր բուրդը եւ կալուտայ, առանց մարդը խայթելու, բայց երբ որ մկմելու գանք, շատ զգոյշ պէտք է ըլլանք ձեր թոցներէն:

## ՓՈՔՐԻԿ ԸՆՏԱՆԻՔԸ

Հայրը ԲԹԱՄԱՏ՝ ոչխար մը գընեց,  
Վայրը ՑՈՒՑԱՄԱՏ՝ զատիկին մորթեց,  
Եղբայրը ՄԻԶԱՄԱՏ՝ քերթեց ու մաքրեց,  
Քոյրը ՄԱՏՆԵՄԱՏ՝ համեմեց եփեց,  
Պըտթիկ ձբութթը՝ նէմ, նէմ, նէմ, ծամեց:





## ԴՐԱՑԻՆԵՐԸ

Եղաղաղները  
չորս անգամ կան  
չեղին հաւնոցի  
թառէն, եւ վար-  
պետ - Արդանը  
հազիւ արթըն-  
ցած, ախոռ ի-  
ջաւ:

Յաջորդ շաբ-  
թուն բարեկեն-  
դան էր, եւ ինք  
որոշած էր որ

այդ օրը կարմիր հորթը քաղաք տանի ծախէ, ու ա-  
նոր շահով տանը պէտք եղած ուտելիքները զնէ:

Հպարտ մարդ էր վարպետ-Արդանը, փափագե-  
ցաւ որ այդ օրը բնաւ չի լուսնայ, ու դրացիները չի  
տեսնան իր հորթին քաղաք տանիք: Բայց հազիւ  
փողոցը դարձած, տեսաւ որ դիմացէն թղուկ-Առաքե-  
լը կողմը կուգայ, հրացանը ուսին, ետեւէն քաշե-  
լով իր հասակէն մեծ պարարտ հնդկահաւ մը:



—Ուր ասանկ դրա՛ցի  
հորթդ ծախելո՞ւ կ'եր-  
թաս քաղաք, հարցուց  
թղուկ-Առաքելը:

—Աստուա՛ծ չընէ, պա-  
տասխանեց վարպետ  
Աարդանը, վարպետօրէն

ստելով, լուս-աղբիւրին ջուրով լուալու կ'երթամ հոր-  
թին աչքերը, որ առողջ ըլլայ իր մօրը պէս, դո՞ւն ուր:

—Ես ալ ըսաւ խորամանկ թղուկ-Առաքելը, Սուբբ  
Սարգիսի վանքին մատաղ կը տանիմ, որ գործերուո  
յաջողութիւն տայ:

Ու երկուքն ալ իրար հաւատացնելու համար, հա-  
կառակ ճամբաներէ մեկնեցան:

Երկու ժամ վերջը, շուկային մէջ երկու դրացիները  
հեռուէն լրտեսեցին իրար, մէկը իր հորթին սակար-  
կութիւնով զբաղած էր, միւսը իր ծախած հնդկահա-  
ւին փոխարժէքը կը գանձէր. ու միտքերնուն խնդացին:

Երիկուան, մախաղները լեցուն, գիւղի ճամբուն  
վրայ նորէն հանդիպեցան իրար:

—Եյդ ի՞նչ է, հորթդ ո՞ւր թղուցիր, հար-

ցոյց թղուկ-Ծռաքելը աչքը բթթելով:

— Կարծեմ թէ այս տարուան բարեկենդանը, երկու-  
թիս տունէն ալ մատաղ կ'ուզէր. սսաւ վարպետ-Ա ար-  
դանը բիթին տակէն խնդալով:



## Ի՞նչ կ'ըսեմ

Եօթ առաւօտուն մէկը բարեւեմ՝ կ'ըսեմ . . .  
Եօթ դուրս կ'երթամ՝ կ'ըսեմ . . .

Եօթ շաքար ուզեմ՝ կ'ըսեմ . . .

Եօթ հիւթ մը գայ՝ կ'ըսեմ . . .

Եօթ ինձի տաս զնդակդ՝ կ'ըսեմ . . .

Եօթ բեզի այցելեմ՝ կ'ըսեմ . . .

Եօթ բովեղ մեկնիմ՝ կ'ըսեմ . . .

«Եթէ կը հաճիք», «բարի լոյս», «բարի եկաք»  
«մնաք բարով», «ցտեսութիւն», «ի՞նչպէս էք», «չնոր-  
հակալ եմ»:

(Աէտերուն տեղ դրեք այս պատասխաններէն յար-  
մառողոջները):



## ԱԳԱՐԱԿԸ

Եմառը, արձակուրդի օրերուն, Վարդգէսենց ա-  
գարակը գացեր էինք:

Վառքով բաւական երկար ճամբորդութիւն մը ը-  
ռինք, եւ մեծ հաճոյք պատճառեց ինձի:

Վարդգէսը շատ ընկերներ չունի, ատոր համար էր  
ոք մեզ տեսնելուն պէս, ուրախութենէն ցատկուեց:

Եօթ կառքը կեցաւ ագարակի մեծ դրան առջեւ,  
հայրիկս վար իջաւ ու ժպտելով բարեւեց բոլորը, եւ  
Վարդգէսին հօրը ձեռքը թոթուելով, սսաւ ինձի,  
=Սարօ՛, ահաւասիկ աշխարհի ազնիւ մարդերէն մէկը:

Եօթէն այթած, բայց առողջ դէմք մը ունէր պա-  
րոն թոռոսը, եւ իր ագարակապանի լայն հագուստնե-  
րուն մէջ, հսկայ մը երեւցաւ ինձի:

Սաստիկ տաք էր այդ օրը, եւ ճաշը ուռիներուն  
շուքին տակ ըրինք, այն տեղ զով էր, ու հովը անուշ  
հոտեր կը բերէր նոր հնձուած արտերէն:

— Տղա՛ք, ըստ տիկին Եւան, Ա արդգէսին մայրիկը,  
մածուն կերէք որ արեւը ձեզ չի դարնէ, եւ աման մը  
մածուն դրաւ մեր առջեւը, ի՞նչ համով էք այդ ազա-  
տակի թարմ կաթով պատրաստուած մածունը,

Ըմբողջ օրը վազվեցինք արտերուն մէջ: Խնձորե-  
նիին եւ սալուենիին վրայ բարձրացանք: Տեսայ կովե-  
ռոն ախոռը, ճագարներուն բոյնը, հաւնոցը, խողանո-  
ցը եւ աղանետունը:

Երիկունը, երբ վերադարձի ատենը եկաւ, Ա արդ-  
գէսը յանկարծ դուրս ելաւ իր լայն գլխարկին մէջ  
թարմ հաւկիթներ լեցուցած, եւ խնդալով ինձի բերաւ:  
Տիկին Եւան խոշոր ծաղկեփունջ մը շինելով մեղի  
նուիրեց, խոկ պարոն թարոսը՝ սլառուղներով եւ բան-  
ջարեղեններով լեցուն կողով մը բռնի տեղաւորեց մեր  
կառքին մէջ:




Երկա՞ր, երկար մնաք բարով ըսինք ի-  
րարու, Ա արդգէսը խոստացաւ հիւր գալ  
մեղի.

Հայրիկս ալ ինձի պէս  
որախ էր, եւ երբ մեծ  
դուռին դուրս ելանք, ին-  
ձի դառնալով ըստաւ.

— Տղա՛ս, սիրէ՛ երկրագործը, անիկայ է որ իր աշ-  
խատանքով հողէն դուրս կը բերէ մեր կերած հացը:

## ՈՒՐԻՇԻՆ ՈՒՆԵՑԱԾԻՆ ԱՉՔ ՄԻ ՏՆԿԵՐ



Կար չկար, գիւղացի  
փայտահար մը կար:

Օր մը գետին եղեր-  
քը փայտ կտրելու ատեն,  
ինչպէս եղաւ կացինը  
ձեռքին թռաւ եւ ջու-  
րին մէջ ինկաւ:

Գետը խորունկ էր,  
եւ գիւղացին չէր կընար  
հանել իր կացինը: Խեղ-

ճը յուսահատութենէն նստեցաւ գետին եղերքը եւ  
ոկսաւ լալ:

Յանկարծ ծերունի մը ելաւ ջուրէն, եւ ոսկիէ կա-  
ցին մը ձեռքին մէջ եկաւ իր առջեւը կեցաւ:

— Ասիկայ է քու կացինդ, ըստա:

— Ո՛չ պատասխանեց գիւղացին:

Ծերունին վերաբերին տակէն հանեց արծաթէ  
կացին մը, ու նորէն հարցուց:

— Ասիկա՞ է:

— Ո՛չ, ոչ պատասխանեց գիւղացին, իմ կացինս  
երկաթէ շինուած է:

— Դուն շիտակ խօսող մարդ ես, ըստ ծերունին, ոչ  
ոսկիին աչք ունեցաք, ոչ ալ արծաթին, ա՛ռ ուրեմն  
քու կացինդ, եւ այս ոսկին ու արծաթն ալ միասին:  
Ու անհետացաւ:

Գիւղացին շատ ուրախացաւ, վազեց գիւղը եւ բո-  
լորին պատմեց:

Հարուստ գիւղացիին մէկը, որ ամէնէն ագահն էր,  
միւս օթը գնաց գետին եղեթքը, եւ ճիշդ նոյն տեղէն  
իր կացինը ջուրը ցցելով, նստեցաւ գետինը եւ սուտ  
լաց ըրաւ:


Միեւնոյն ծերունին դարձեալ երեւցաւ, ոսկիէ կա-  
ցին մը ձեռքին մէջ, եւ հարցուց:

— Եսիկայ է քու կացինդ:

— Եյո՛, ատիկայ է, պոռաց ագահը:

— Շատ լաւ, եթէ քուկդ է, կրնաս առնել, ըստ  
ծերունին, եւ կացինը գետին եղեթքը դնելով անհետա-  
ցաւ:

Ագահը, ուրախութեամբ ծոեցաւ որ կացինը առնէ,  
բայց գլխիվայր ինկաւ ջուրին մէջ եւ անմիջապէս խեղ-  
դքուեցաւ:



## ՀԱՅՐԻԿԻՍ ՊԱՏՄԱԾՈՒ

Հովը եւ արեւը վէճի բռնուեցան, հովը ըստ:

— Խնչ կ'ուզես ըսէ, տիկին արեւ, ես քեզմէ զօրա-  
ւոր եմ, եւ կընամ ուզածիս պէս խաղալ ամէն բանի  
հետ:

— Բնա՛ւ, ըստ արեւը, տակաւին ինձմէ զօրաւոր  
բան չէ ծնած:

— Փորձե՞նք, ըստ հովը:

— Օ՛, հաճոյք մը պիտի ըլլայ քեզի յաղթ ելը պա-  
տասխանեց արեւը, եւ աւելցուց, տե՛ս, վարը լեռան կո-  
ղէն մարդ մը կը բարձրանայ, մեզմէ ով որ անոր կըու-  
նակէն վերաբկուն հանէ, անիկայ է զօրաւորը:

— Լաւ ըստ հովը, եւ սկսաւ փշել փշել, բայց քանի  
կը փշէր, մարդը աւելի կը կոճկէր վերաբկուն:

— Հիմա կարգը իմս է ըստ արեւը, եւ իր ճառա-  
գայթներով այնպէս ողողեց աշխարհը, որ լեռն ի վեր  
բարձրացող մարդը սկսաւ ջուրի պէս քրտնիլ, ու վե-  
րաբկուն հանելով թեւին տակ դրաւ:

— Տեսա՞ր աղջիկս, ըստ արեւը խնդալով, քեզմէ  
զօրաւո՞ր եմ թէ չէ:

— Սկասէ՛ ըստ հովը, որ հիմայ ցոյց տամ ոյժիս  
չափը, եւ խոշոր ամպ մը քշելով, քշելով բերաւ ծած-  
կեց արեւին երեսը, ու փշեց այնքան, որ մարդը մսելով

Նորէն հագաւ վերաբերուն:

— Հը արեւ մայրիկ պոռաց հովք, հիմա համողուեցա՞ր թէ ես ալ զօրաւոր եմ:

— Եյո՛, այո, պատասխանեց արեւը, եւ ձեռք ձեռքի առաջ բալեցին երկնքին ու երկրին մէջ:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Եթե երկինքը որոտայ, ինչի՞նշան է:

Եթե հով փչէ ամառը, ի՞նչ կը զգանք:


Եթե անձրեւ գայ, հողը ի՞նչ կըլլայ:

Եթե ձիւն տեղայ, աշխարհը ի՞նչ գոյնով կը փայլի:

Եթե արձրեւէն յետոյ արեւ ծագի, ինչ կը տեսնենք երկնքին վրայ:

Եթե արեւը ծածկուի ու մութը տիրէ, ինչո՞վ կը լուսաւորուի աշխարհը:

Ծիածանը կամ ծիրանի գօտին՝ եօթը գոյներ ունի, գեղին, նարնջագոյն, կարմիր, մանիշակագոյն, կապոյտ, կանանչ, եւ լեղակագոյն:



## ԱԿՆՈՅԸ

Եւսն շարունակ տան մէջ միայնակ,  
Փակուած ամէն օր նեղուէր, քանի որ  
չէր գիտեր կարդալ:

«Երթամ ես տեսնեմ այն աղուոր ՄԵՍՈՅԻ,  
ըսաւ ինքնիրէն,

«Օոր մամըս կարդար գըրքի մը մէջէն:»

Եյս ըսաւ, գընաց բացաւ գըզրոցը,  
Գընտըռեց գիթքը, դրաւ իր ծոցը,

Յետոյ դառնալով նայեց բայց իզո՞ւը  
Գիթքը թըղթատեց, չէր գիտեր թէ ո՞ւր

փընտըռէթ գանի

Սեւուիկ—Ճերմակ բաներ մը տեսնար,  
տեսակ ու տեսակ:

«Գըտայ պատճառը, ո՞հ ըսաւ յանկաթծ,

«Մեծ մայրիկին պէս չեմ ակնոց գըրած:»

Ըռաւ իր մամուն ակնոցը մեծկակ,

Որ քիթըն ամբողջ կը ծածկէր համակ,


Թաշկինակովն ալ սըրբեց մի անգամ

Երկու ապակին, տարաւ շատ խընամ:  
 Յետոյ դառնալով, թղթատեց մէյմ'ալ,  
 Յուսախաբութիւն, չի գըտաւ ՄԵՍԸՆ:  
 Հասնելով մայրը, տեսաւ ու ըսաւ,  
 “Մամային աչքերըն ունին մեծ ցաւ,  
 “Ճիւանդութիւնըդ՝ այն է որ ծոյլ ես,  
 Ըսաւ մայրն, “ունի՞ս խօսելու երես,  
 “Ե, յս օրէն ուխտէ՛ յաճախել դըպըոց,  
 “Որպէսզի կարդաս չի դըրած ակնոց”:



### ԳԻՇԵՐ ԲԱՐԻ

Երեւն ըրաւ օրուան շրջան,  
 Եհա՛ աստղերը կ'երեւան,  
 Թռուչնիկն ալ գընաց որ հանգչի,  
 Նոյնպէս մննք ալ գիշեր ըարի:



### ՎԱՐՊԵՏ ՄՈՒԿԸ

Եշխոյժ եւ գեղեցիկ որսի շուն մը կը թափառէ՛  
 դաշտին մէջ, երբ տեսաւ մուկ մը որ արմատներ կը  
 կրծէր.

— Ե՞նչ ձղձիմ կենդանի ես ըսաւ, բիշ մնաց որ  
 քեզ ոտքիս տակ ձզմէի:

— Ճղձիմ, ըսաւ մուկը, դուն երբէք փորձած չե՞ս  
 ուրեմն մուկի մը հետ մըցիլ:

— Ո՞չ պատախանեց շունը խնդալով, բայց կ'ուզէի  
 անդամ մը փորձել սրունգներդ, տես հեռուն մեծ ծա-  
 ռին տակ սեւ քար մը կայ, մեզմէ ով որ առաջ հոն  
 հասնի, թող տուփ մը շաքար մօցանակ ստանայ, գո՞հ ես:

— Լաւ ըսաւ մուկը, եւ մ'էկ, երկո՛ւ, երե՛ք ըսածին  
 պէս երկուքը մէկ ճամբայ ելան: Բայց խոթամանկ մուկը  
 կամաց մը շունին վրայ ցատկելով պոչին տակ պահ-  
 ութեցաւ, եւ երբ նպատակին հասնելու երեք քայլ  
 մնացած էր, մուկը մէկ ոստումով քարին վրայ ցատ-  
 կեց, ու գօաւը շահեցաւ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻՇԵՐԸ


Հայաստանը մեծ ծովերէն հեռու է, ատոք համար ցամաքային երկիր կը կոչենք: Բայց բարեբախտաբար իր մէջ կան՝ բացի բազմաթիւ գետերէ՝ մեծ ու փոքր գեղեցիկ լիճեր: Անոնցմէ, Աշնայ եւ Սեւանայ լիճերը ծով կոչուելու չափ ընդարձակ են, իրենց վրայ առաջատանաւեր եւ փոքր շողենաւեր կը բանին:

Աշնայ ծովը կը կոչուի նաեւ Տոսպայ լիճ, ջուրը աղի է, եւ կը պարունակէ համեղ ձուկեր: Այս ծովին մէջն են Աղթամար, Լիմ, Առտէր եւ Կտուց կղզիները:

Աշնայ ծովին քիչ մը հեռու կան քանի մը փոքր լիճեր, կարեւորներն են Արչակայ, Աերովթայ եւ Կաղիկ լիճերը:

Սեւանայ լիճը, կը կոչուի նաեւ Գեղամայ ծով, Մայրաբաղար Երեւանի մօտ է: Գուրը անուշ է, եւ ասոր մէջ ալ կան շատ համեղ ձուկեր:


Ուրիշ կարեւոր լիճեր են, Շոռվը՝ Խարբերդի մօտ, Գայլատուայ լիճ՝ Վարաբիլիսայի մօտ, Չըլտըրի լիճ՝ Երտահանի մօտ:



## ՊԱՐՈՆ ՀՆԴԿԱՀՍԻՒՆ ՊՏՈՅՏԸ

[ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ ՊԱՏՄԱԾԸ]

—Ո՞յ, այս ի՞նչ աղուոք առաւօտ է, ըստ հնդկահաւը, կանգնելով ագարակի բակին մէջ: Եւ թեւերն ու պոչը ուռեցնելով եթ կա՞ր, երկար յօրանջեց: Ենուշ հոտեր կուգային քիթին, նայեցաւ շուրջը, արեւը կարմիր ներկեր էթ լիճին ու արտերուն երեսը, փափագեցաւ երկար պտոյտ մը ընել, բայց առանց ընկերի:



—Հէյ, հաւ խաթուն, ձայնեց քիթը հաւոցէն ներս խոթելով, արեւը շատ տաքուկ է այս առաւօտ, կուգա՞ս ինծի հետ շոջի ցուքնի դէղերուն շուրջը:



—Տղայ ես դրացի, ըստ հոււը, դեռ երեր օք է եօթը ձագերու մայր ըլ-

լալս, չե՞ս կարծեր ոք ոտքս դռնէն դուրս դնելս ամօթ կ'ոլլայ, ութիշ մը հօաւիրէ առայժմ:

— Իրաւո՞ր շատ անմիտ եմ, ըստ ինքնիրեն հնդկահաւը, պէտք էր ես իմ գլխուս յարմար ընկեր մը ընտրէի:

Եջ նայեցաւ, ձախ նայեցաւ, կատուն տեսաւ, որ գերանի մը վրայ նստած, առաւօտեան արդուզարդը կ'ընէր:




— Բարի լոյս վա՛րպետ, պոռաց վարէն, իր ամէնէն քնքոյշ ձայնովը. արտոյտէն հրաւէր ստացայ այս առաւօտ, կը գրէ թէ ինձոյք ունի վարի արտին ցանկին ներքեւ, չե՞ս ուղեր ինձի հետ մինչեւ հոն եթկննալ:

— Ըհ, լաւ կըլլած, ըստ կատուն, բայց այսօր տունէն պիտի փոխադրուիմ, եւ մինչեւ իրիկուն զբաղած պիտի ըլլամ:

Հնդկահաւը հասկցաւ որ անօգուտէր պնդելը, պոչին վըռայ ետ դարձաւ ու քայլերը ուղղեց դէպի շունը,

— Բարի առաւօտ կնքա՛հայր, կ ան չեց պատուհանէն վեր գլուխը տնկելով, առ ո՞ւր ես, ձայնդ չելեր, արեւը շատ անուշ է, եւ ձնձուկները պար բռներ են, չէի՞ր ուզեր առաւօտեան համով նախաճաշ մը ընել, վարը փոքրիկ կորեկի արտին մէջ: — Զէ՛ սանահայր, պատասխանեց շունը, նախաճա-




շըս առաւօտ կանուխ լիճին եզերքը որի: Ես ու տէսս բաղի որսորդութեան գացեր էինք, եւ հիմա կոշիկներս կը մաքքեմ:

Հնդկահաւը աչք մը նետեց խշտիէն ներս, տեսաւ որ շունը բաղմեր էր գետինը, ու խոզանակ մը ձեռքը կոշիկ կը ներկէր: Եւ որքա՞ն շատ էին անոնք, զոյգեռով կոշիկներ ու կոշիկներ, մինչեւ իրիկուն հազիւ կաւարտէր: Հոգը չըթաւ սակայն, բարեկա՞մ կը պտկսէր, խոզը կար տակաւին, ու անոր ընկերակցութիւնը հաճելի էր իրեն:

Շատ քալեց, քիչ քալեց, աղրի ու ձենձի հոտեր զգացուցին իրեն, որ խոզանոցը հասեր էր:

— Բարի յաջողութիւն ընկե՞ր, ըստ դռան ծակէն ներս նայելով, արեւին շողերը շատ քնքուշ են այս առաւօտ, ինձի հետ դաշտային պտոյտ մը ընել չէի՞ս ուզեր:



— Զէ՛ քեռի, պատասխանեց խոզը, կը տեսնես որ նախաճաշովս զբաղած եմ, երբ լմնցունեմ, ձաշս պիտի պատրաստեմ, եւ երբ ձաշս աւարտի, իրիկուան ընթթիքիս պիտի սկսիմ:


— Ուրեմն մինչեւ իրկուն զբաղած պիտի ոլլայ այս

շատակեթը, մտածեց ինքնիրեն, ու կտուցը արեւին,  
թեւեթը հովին, հաւոցին կողմը շտկուեցաւ նորէն:  
Ագաղաղէն հաճելի ընկե՞ր կար, կրնային թէ՛ շրջիլ, թէ՛  
միասին կատակել ձամբան, եթէ միայն յօժարէր:

—Ա՛ս իջիթ թառէդ վե-


հա՛փառ, աղաղակեց շունչը  
կըտրած, արեւը լաւ մը կարմրեր  
է, եկուր քիչ մը քալենք գետն  
ի վար, ասանկ առիթ քանի՞  
անգամ կունենանք:

—Ախ, երանի թէ ես ալ  
քեզի պէս անհոգ մէկը ըլլայի, ըսաւ ագաղաղը, տիկինս  
այսօթ լուացք պիտի ընէ, եւ ես երկու աչքով պէտք է  
հակեմ վառեակներուն վրայ: Ա՛զ առաւօտ կուգամ  
սակայն, խօսք խօսք է:



—Է՛ ուրեմն, ըն-  
կեր մը ձարելը այդ-  
քա՞ն դժուար բան է  
եղեր մրմուց հընդ-  
կահաւը, ու ձարա-  
հատ իթ յարկարա-  
ժինը անցաւ:

—Անուշո, ըսաւ  
տիկին հնդկահաւին  
քեզ պտոյտի մը տանիլ կ'ուզէի, բայց այնքան յոգնած



եմ, որ կարծես մեծ շրջագայութենէ մը կը դառնամ:  
—«Է՛ կարծեմ փափագած պտոյտս ալ ըթի», ըսաւ  
միտքէն իննդալով:

Զէ՞ք կարծեր որ հնդկահաւը իթ փափագած պը-  
տոյտը իրաւ ըթեր էր:

## ՓՈՔՐԻԿ ՄԱՅՐԻԿԸ

ՄԵՅՐԻԿԸ.-Ա՛ եկէ՛ք տօքթոր, աղջիկըս տեսէ՛ք,  
Հիւանդ է վախնամ, եկէ՛ք, շուտ ըթէք,  
Եթէկ օրն իբուն, տըուի ամէն բան,  
Ռայց փըշուրն անգամ չի դըրաւ իթ բերան:  
Անկողինին մէջ, ասդին ու անդին  
Տապըլտըկի նա, Ճա՛զ մը հիւանդին:  
ԲԺԻՇԿԸ.-Ըսէ՛ք ինձ խընդրեմ, յարգելի տիկին,  
Այս առաւօտ ի՞նչ կերցուցիք պըզտիկին:

ՄԵՅՐԻԿԸ.-Կարկանդակ...:

ԲԺԻՇԿԸ.-Ի՞նչ, կարկանդակ...Տէ՛ք ողորմեա,  
Թաէ որ ուտէր, գիտցէ՛ք, պիտի ըլլար  
ՀՈՒՄՄԸ:

Աերէ՛ք սա կարկանդակը, Ճաշակեմ  
սանկ անգամ մը,  
Սանկ համը հասկընամ, ապա թէ ուտեմ...

ՄԵՅՐԻԿԸ.-Ռայց ո՞չ, կաղաչեմ, ի՞նչ կ'ընէք Տօքթո՞ր,  
Կերաք ամէնքն ալ, ցը վերջին կըտոր,  
Տէ՛ք ողորմեա, չի մընաց ահա՛:  
ԲԺԻՇԿԸ.-Պիտի ուտեմ որ, հիւանդն ալ շուտ մը

աղէկնայ,

Միայն թո՛ղ պառկի տաքուկ անկողին,  
 «Ըղէկցա՛» ըսէք ձեզ հարցընողին:  
 Այս դեղն ու ջուրը չի մոռնաք սակայն,  
 Առտու իրիկուն գործածեցէք զայն:  
 Մընաք բարեաւ տիկին:

ՄԵՅՐԻԿԱ.-Երթաք բարեաւ տօքթոք:

Տօքթոքը միայն ինքինքը մըտածեց,  
 Դմէ կարկանդակըս ճաշակեց,  
 Թէ ամէն մարդ ինքինքը  
 մըտածէ,

Ալայ աղք որ աշխարհ եկած է:

### ԲԺԻՇԿԸ

Բժիշկը ե՞րբ կը կանչենք, երբ հիւանդ կ'ոլ լանք  
 այնպէս չէ: Գիտէ՞ք թէ որքան բարի է բժիշկը, անի-  
 կայ ամէն վայրկեան պատրաստ է մեղի օգնելու, զի-  
 շեր ոլլայ թէ ցորեկ, ձիւնին կամ անձրեւին մէջէն մե-  
 զի կուգայ առանց գանգատի:

Տեսէ՞ք իր պայուսակը, անոր մէջ միշտ կարեւոր  
 դեղեր եւ գործիք կը պահէ, հիւանդ մը կաս վիրա-  
 սոր մը անմիջապէս դարմանելու համար: Գրեթէ փոք-  
 րիկ շարժուն դարմանատուն մըն է ատիկայ, միշտ  
 անբաժան:

• բնաւ հիւանդ եղած էք: Ո՞վ դարմանած է  
 • բած է ձեզ: Կրնաք պատմել թէ ինչպէս  
 հիւանդ: Պապէս բուժուեցաք:



### ԳՐԱՏԱՆՍ ՄԵԶ ՄԻՋՏ ՊԱՏՐԱՍ ԿԱՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ  
 ԵՐԳԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԶԱՑՆԱԳՐՈՒՄԸ ԵՐԳԵՐ  
 ԶՈՒԹԱԿԻ ԵՒ ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ

### ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԵԱԹՆԵՐ

Ցարզելի Ուսուցիչներու եւ Ծնողներու ուշադրութեան կը յանմենք՝ մասնաւրաբար  
 մանուկներու եւ պատանիներու համար զրուստ հետեւեալ գրքերու ցանկը.

ԱԿ-ԲՈՂԱԾ, Պակեր-զորդ	0.30
ԱԽՕԵՆՑ ՍՏԵՓԱՆԸ	0.20
ԲԱՍԹԷԾՈՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ	.15
ԲՈՒՏՈՆԸ	.40
ԳՈՂԸ	.25
ՌԱԼԻՍՍԱՆ	.30
ԹՂԹԵ ՆԱԻԱԿԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԱԽԸ, Վ.Բ. Փափառեան	.40
ՈՍԿԵ ԱՂՋԻԿԸ	.40
ՑԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԻՒԼԻՎԵՐԻ	.25
ՀԵՔԵԱԹՆԵՐ ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՈՒԵՐԻ, Յ Հատոր	1.20
ՕՏԱՐ ՀԵՔԵԱԹՆԵՐ, Ա. և Բ. Հատոր	.80
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԵԱԹՆԵՐ	.40
ՄՐՁԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԵՆ	.40
ՆՈՐ ՄԱՅՐԻԿԻՑ	.20
ՌԻԹԸ ՀԵՔԵԱԹՆԵՐ	.30
ԳԵՐՈՎԵՆ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ	.15
ՄԳԻՏԱԿ ՏԱՐԵՂՆԻԿԸ	.40
ՔՆԱԾ ԱՐՔԱՅԱՆՈՒՍՈՐԸ	.10

Գրացուցակը միշտ ճրի կը խրկուի փափառողներու

3370



ՀՀ Ազգային գրադարան



976 50 UELVA

Aug 5

## PAROS BOOK STORE

3129 WOODWARD AVE.

Detroit, Mich.

Shinola Press, 109 W. Larned St., Detroit 2072 Detroit, Mich.